ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ------- -----2016թ. N--- ---Ա

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18–ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 305-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 3 հավելվածում «Հրայր Անտոնյան» բառերը փոխարինել «Հովհաննես Վարդանյան» բառերով, իսկ «Դավիթ Գյուլումյան - Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Դավիթ Գյուլումյան - «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի փոխտնօրեն» բառերով.

2) N 8 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) N 10 հավելվածում «Առաքելյան Մարինե» բառերը փոխարինել «Ապրեսյան Հայկ» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի մարտի 18-ի N 305-Ա որոշման

«Հավելված N 8
Երևան քաղաքի ավագանու
2016 թվականի ----------ի
N ----Ա որոշման

Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը

Հանձնաժողովի նախագահ՝

Արմեն Ուլիխանյան	Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմեն Ալավերդյան	Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ

Հանձնաժովի անդամներ՝

Նարինե Պետրոսյան	Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի պետ
Արմինե Անդրանիկյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Նոր Նորքի տարածքային բաժնի պետի տեղակալ
Համլետ Վանեսյան	Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ/մանկավարժ/
Քրիստինե Նշանյան	Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ
Կարինե Ղազարյան	Երևանի «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի մանկական բաժնի վարիչ
Սվետլանա Փերիվանյան	«Երևանի հ. 114 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հոգեբան
Ռոման Մնոյան	ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի դպրոցական տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ»:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26–ի N161-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N305–Ա որոշմամբ հաստատվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը:

Երևան քաղաքի ավագանու վերը նշված որոշմամբ հաստատված Երևան քաղաքի Արաբկիր, Նուբարաշեն և Նոր Նորք վարչական շրջանների աշխատակազմերի ղեկավարներին կից հանձնաժողովների անհատական կազմերում համապատասխան փոփոխությունների կատարումը պայմանավորված է հանձնաժողովի անդամ հանդիսացող աշխատակիցների զբաղեցրած պաշտոնից ազատվելու, հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու, հանձնաժողովում ընդգրկվածության և գործունեության լիարժեքությունն ապահովելու, ինչպես նաև նշված հանձնաժողովների աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու հանգամանքներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի N305-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի N305-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առընչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**